ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետ Լուսինե Ավագյանի 2022 թվականի նոյեմբերի 8-ից 11-ը Ռուսաստանի Դաշնություն (Սանկտ Պետերբուրգ) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

Լուսինե Ավագյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Ռուսաստանի Դաշնություն (Սանկտ Պետերբուրգ), 2022 թվականի նոյեմբերի 8-ից 11-ը ներառյալ:

4. **Հրավիրող կողմը՝**

Այցը կազմակերպվել է Անկախ պետությունների համագործացության (ԱՊՀ) անդամ պետությունների միջխորհրդարանային համաժողովի խորհրդի հրավերի հիման վրա:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

Գործուղման հիմնական նպատակն էր՝

Travel Hub "СОДРУЖЕСТВО" միջազգային զբոսաշրջային ֆորումին մասնակցության ապահովումը՝

2022 թվականի նոյեմբերի 9-11-ը Ռուսաստանի Դաշնության Սանկտ Պետերբուրգ քաղաքի Տավրիկյան պալատում՝ ԱՊՀ Միջխորհրդարանային համաժողովների գրասենյակում կայացել է Travel Hub "СОДРУЖЕСТВО" միջազգային զբոսաշրջային ֆորումը: Travel Hub "СОДРУЖЕСТВО"-ն ԱՊՀ անդամ պետությունների զբոսաշրջության

ոլորտի բոլոր ներկայացուցիչների՝ պետական գերատեսչությունների, ոչ առևտրային կազմակերպությունների, գործարար ոլորտի համախմբման հարթակ է: Միջոցառման հիմնական նպատակն է ավելացնել զբոսաշրջային հոսքերը դեպի ԱՊՀ երկրներ, ինչպես նաև՝ բարձրացնել այդ երկրների ճանաչելիությունն ու գրավչությունը:

Travel Hub "СОДРУЖЕСТВО" նախագիծը ներառված է 2021-2030 թվականներին զբոսաշրջության ոլորտում ԱՊՀ անդամ պետությունների համագործակցության զարգացման ռազմավարության 2021-2023 թվականների միջոցառումների պլանում, որը հաստատվել է ԱՊՀ արտաքին գործերի նախարարների խորհրդի կողմից:

Միջոցառման շրջանակներում իրականացվել են ԱՊՀ անդամ պետությունների զբոսաշրջության պատասխանատու գերատեսչությունների կողմից իրենց երկրների զբոսաշրջության ոլորտի շնորհանդեսներ:

Միջոցառման բոլոր օրերի ընթացքում տեղի է ունեցել միջազգային զբոսաշրջային ցուցահանդես, որտեղ ԱՊՀ անդամ պետությունները ներկայացվել են պետական տաղավարներով՝ ներկայացնելով իրենց երկրների զբոսաշրջային ներուժը: Տաղավարները միանման էին և տրամադրվել էին կազմակերպիչների կողմից:

6. Քննարկված թեմաները՝

Միջոցառման ընթացքում տեղի են ունեցել նիստեր, որոնց ընթացքում քննարկվել են հետևյալ թեմաները՝

- Զբոսաշրջությունն ԱՊՀ երկրներում. Շուկայի փոփոխությունը համաշխարհային միտումների ազդեցության ներքո,
- ԱՊՀ անդամ պետությունների ինտեգրում մեկ զբոսաշրջային տարածքում,
- Զբոսաշրջության ոլորտում ԱՊՀ անդամ պետությունների համագործակցության մարտահրավերները, խնդիրները, կանխատեսումները, հեռանկարները,
- Էկո զբոսաշրջություն. մոդելային օրենսդրություն,
- Բժշկական զբոսաշրջություն,
- Զբոսաշրջության ոլորտում կադրերի պատրաստում:

7. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Միջոցառման շրջանակներում ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեի կողմից ներկայացվել է Հայաստանի զբոսաշրջության ոլորտի շնորհադես՝ ներկայացնելով Հայաստանի զբոսաշրջության ոլորտը և զբոսաշրջային ներուժը:

Միևնույն ժամանակ, զուգահեռաբար ընթացող միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսին ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեն ներկայացված էր պետական տաղավարով, որի շրջանակներում տեղի են ունեցել բազմաթիվ հանդիպումներ ԱՊՀ անդամ պետությունների զբոսաշրջային ոլորտի պետական և մասնավոր հատվածի ներկայացուցիչների հետ՝ քննարկելով հետագա համագործակցության հնարավորությունները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Փոխադարձ պայմանավորվածություն է ձեռք բերվել ԱՊՀ անդամ պետությունների կողմից Travel Hub "СОДРУЖЕСТВО" ամենամյա միջազգային զբոսաշրջային ֆորումի շրջանակներում առավել ակտիվ և սերտ համագործակցության:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Միջոցառման կազմակերպիչների կողմից ակնկալվում է ստեղծել աշխատանքային խումբ՝ միջոցառման արդյունքների ամփոփման, հետագա համագործակցային հնարավորությունների քննարկման, հաջորդ տարի միջոցառմանը պատշաճ մասնակցության ապահովման նպատակով:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

14.11.2022թ.